



սեփականություն հանդիսացող և Վ.Բաբայանի անվամբ գրանցված անշարժ գույքը և այդ գույքի 1/2 մասով անվավեր ճանաչել գույքի նկատմամբ իրավունքների գրառումները:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ 2014 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ մեկ հայցադիմումում միացված են միմյանց հետ չկապված պահանջներ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/, հայցվորի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, 2014 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է և Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ հայցվոր Ի.Մելքունյանը 2014 թվականի մարտի 3-ին բերել է վճռաբեկ բողոք:

Գերագույն դատարանի 2014 թվականի մարտի 14-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

1. Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է ԼՂՀ ընտանեկան և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի պահանջների խախտումներով: Վերաքննիչ դատարանը պարտավոր է եղել ղեկավարվել ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով և վերաքննիչ բողոքը բավարարել:

2. Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի և 82-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները ու անհիմն մերժել վերաքննիչ բողոքը:

Վերը նշվածը բողոք բերած անձը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 17-րդ հոդվածների պահանջներից երևում է, որ ընտանեկան հարաբերությունների հետ կապված վեճերը, այդ թվում՝ ոչ գույքային ու գույքային, լուծվում են ԼՂՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված կարգով, այսինքն՝ ամուսնությունը լուծելիս դատարանը պարտավոր է ամուսիններից մեկի պահանջով կատարել նաև նրանց ընդհանուր սեփականություն համարվող գույքի բաժանում: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանի դատավորը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը քննարկելիս պարտավոր է եղել պարզել իր և Վաչե Բաբայանի ամուսնության փաստը, ինչպես նաև Ստեփանակերտ քաղաքի Ս.Դավիթ փողոցի թիվ 56/60, 56/66 և Շուշի քաղաքի Հախումյան փողոցի թիվ 15 հասցեով գտնվող գույքի սեփականության իրավունքով պատկանելիության ու գույքի բաժանմամբ երրորդ անձանց շահերը շոշափելու հարցերը և պարզելով, որ դրա բաժանումը երրորդ անձանց շահերը չի շոշափում, ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով, հայցադիմումն ընդունել վարույթ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ, անհիմն եզրակացնելով, որ Ի.Մելքունյանը ներկայացրել է մի քանի պատասխանողներին ուղղված և միմյանց հետ չկապված մի քանի պահանջներ:

Բողոքը քննության ընդունելու անհրաժեշտությունը բողոք բերած անձը հիմնավորել է օրենքի միատեսակ կիրառության համար Գերագույն դատարանի

կողմից կայացվելիք որոշման էական նշանակություն ունենալու և ստորագրաս դատարանի կողմից թույլ տրված առերևույթ դատական սխալի արդյունքում ծանր հետևանքներ առաջանալու հանգամանքներով:

Վերոգրյալի հիման վրա խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնել և կայացնել նոր դատական ակտ:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայցվոր Իննա Մելքումյանը հայցադիմում է ներկայացրել դատարան իր և Վաչե Բաբայանի ամուսնությունը լուծելու և համատեղ սեփականություն հանդիսացող գույքը բաժանելու, 1/2 մասով անվավեր ճանաչելու նշված գույքի նկատմամբ Վ. Բաբայանի իրավունքների գրառումները:

2. Առաջին ատյանի դատարանի 2014թ. փետրվարի 12-ի որոշմամբ Իննա Մելքումյանի հայցադիմումը վերադարձվել է՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով՝ մեկ հայցադիմումում միացված մեկ կամ մի քանի պատասխանողներին ուղղված՝ միմյանց հետ չկապված մի քանի պահանջների առկայության հիմնավորմամբ:

3. Վերաքննիչ դատարանը 2014թ. փետրվարի 26-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ չանդրադառնալով հայցվոր Ի. Մելքումյանի վերաքննիչ բողոքում վկայակոչած ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի՝ ամուսինների ընդհանուր գույքի բաժանմանը վերաբերող նորմին և չհստակեցնելով, թե հայցվորի որ պահանջներն են համարվում միմյանց հետ չկապված և մեկ վարույթում քննության չենթակա:

### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Գերագույն դատարանը, վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, իսկ բողոքարկվող որոշումը՝ բեկանման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք: ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը: Այսպիսով, Սահմանադրության նշված իրավական նորմերը սահմանում են մարդու կարևորագույն իրավունքներից դատական պաշտպանության և արդարացի դատական քննության իրավունքների իրականացման երաշխիքները:

Նշված սահմանադրական նորմերն իրենց արտացոլումն են գտել նաև ԼՂՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածում, որի 2-րդ մասը սահմանում է. «Ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից»:

Սույն քաղաքացիական նյութով վճռաբեկ բողոքը Գերագույն դատարանի քննությանն ընդունելը պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությամբ այն հարցերի շուրջ, ինչպիսիք են մարդու դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը, դատարան ներկայացված հայցադիմումների /դիմումների/ ընդունմանը ներկայացվող

պահանջները /դրանց անհիմն վերադարձները բացառելու նպատակով/, դատարանի իրավասությունների իրականացումը քաղաքացիական գործի հարուցման փուլում:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քաղաքացիական գործերով շահագրգռված անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը կախված է հայցադիմումը /դիմումը/ ընդունելիս դատավորի ճիշտ գործողություններից, քանզի հայցի հարուցումը կարևորագույն դատավարական գործողություն է, որը նախադրյալներ է ստեղծում դատարանի առջև դրված խնդրի իրականացման, այն է՝ գործը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու, համար:

ԼՂՀ դատական օրենսգրքի 16-րդ հոդվածում սահմանվում են արդարադատության արդյունավետ իրականացման սկզբունքները: Նշված հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատարանում գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով կողմերի մասնակցությամբ, որպես կանոն, իրականացվում է գործի դատական քննության նախապատրաստական փուլ, գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում պետք է նշվեն՝ 1/ դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը, 2/ գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը, հայրանունը, ... իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության /գտնվելու վայրի/ հասցեները, այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձնագրային տվյալները, ...3/ հայցագիներ, եթե հայցը ենթակա է գնահատման, 4/ հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները, 5/ հայցապահանջները հաստատող ապացույցները, 6/ բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը, 7/ հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները, 8/ հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Հայցադիմումում կարող են նշվել նաև այլ տեղեկություններ, եթե դրանք անհրաժեշտ են վեճի ճիշտ լուծման համար, ինչպես նաև հայցվորի միջնորդությունները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի մեկ հայցադիմումում միացնել միմյանց հետ կապված մի քանի պահանջներ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորը պարտավոր է վարույթ ընդունել սույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը:

Վերոնշված նորմերի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ հայցվորի կողմից ներկայացվող հայցադիմումի ձևը և բովանդակությունը պետք է համապատասխանեն օրենքով նախատեսված պահանջներին, հակառակ դեպքում, համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ և 81-րդ հոդվածների պահանջների, դատարանի կողմից հայցադիմումը /դիմումը/ կարող է վերադարձվել կամ դրա ընդունումը՝ մերժվել: Սակայն հայցադիմումը վերադարձնելու իր իրավունքը դատարանը իրականացնում է ոչ թե հայեցողական իրավագործությամբ, այլ օրենսդրի կողմից սահմանած սպառիչ հիմքերի առկայության դեպքում: Այդ հիմքերը թվարկված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե՝ 1/ չեն պահպանվել սույն օրենսգրքի 77-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները, 2/ հայցադիմումն ստորագրված չէ կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնական դրությունը նշված չէ, 3/ գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին, 4/ այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ, 5/ չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն՝ բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը կամ նման միջնորդությունը մերժվել է, 6/ մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանողներին ողղված միմյանց հետ չկապված պահանջներ, 7/ մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն վերադարձնելու մասին, 8/ ամուսինը կնոջ հղիության ժամանակ կամ երեխան ծնվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առանց կնոջ համաձայնության ամուսնալուծության դիմում է տվել:

Սյուս բոլոր դեպքերում, համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի, դատավորը պարտավոր է հայցադիմումն ընդունել վարույթ և ձեռնարկել բոլոր միջոցները այն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու համար, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որոնց՝ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով դատարանը ձեռնամուխ է լինում գործը դատաքննության նախապատրաստելուն:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ /անպատշաճ կողմի փոխարինումը/, 77-րդ /հայցադիմումի ձևը և բովանդակությունը/, 85-րդ /հայցադիմումի պատասխանը և այն ներկայացնելու կարգը/, 141-րդ, 143-րդ, 144-րդ /գործը դատաքննության նախապատրաստելու վերաբերյալ նորմերը/ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայց ներկայացնելիս հայցվորը պարտավոր չէ իրավական հիմնավորում տալ իր պահանջներին, դատարանն ինքն է պարտավոր կիրառել այն նորմերը, որոնք կարգավորում են տվյալ վեճը, պարզելով հայցի առարկան և հիմքը, գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը, մի քանի պահանջների միացման և առանձնացման հարցերը և այլն, իսկ հայցվորն իրավասու է հայցի հիմքը կամ առարկան փոփոխել, պատասխանողն ուղարկում է հայցադիմումի պատասխան, որում արտահայտում է իր դիրքորոշումը ներկայացված հայցի վերաբերյալ:

Գերագույն դատարանը սույն բողոքի քննության շրջանակներում արձանագրում է, որ հայցադիմումը վերադարձնելու բոլոր դեպքերում դատավորն այդ մասին պետք է կայացնի պատճառաբանված որոշում, որը պետք է լինի օրինական և հիմնավորված: Իսկ օրինական և հիմնավորված կարող է համարվել միայն այն դատական ակտը, որը կայացվել է օրենքի պահանջների պահպանմամբ: Մինչդեռ Առաջին աստիանի դատարանն իր 12.02.2014թ. որոշմամբ վերադարձնելով Ի.Մելքումյանի հայցադիմումը և մատնանշելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, չի պատճառաբանել, թե հայցադիմումում նշված որ պահանջներն է գտնում իրար հետ չկապված:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պարզելու համար, թե արդյոք ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել իրավական նորմերի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են բողոքաբերի իրավունքների խախտմանը և ազդել նրա կողմից ներկայացված հայցադիմումի ընթացքավորման վրա, անհրաժեշտ է վերլուծել վեճը կարգավորող ընտանեկան իրավունքի նորմերը:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Գործող օրենսդրության համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ գույքը բաժանվում է, այսինքն՝ և որոշվում է նրանցից յուրաքանչյուրի բաժնի չափը հետևյալ դեպքերում. 1/ ամուսիններից մեկի գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում, 2/ ամուսիններից մեկի մահվան կամ դատական կարգով մահացած հայտարարելու դեպքում, 3/ երբ ամուսինները այն անհրաժեշտ են գտնում ամուսնության ընթացքում, և 4/ երբ ամուսիններն ամուսնալուծվում են:

Մասնավորապես, ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի՝ «Ամուսնալուծվելիս ամուսինների միջև ծագող վեճերի քննարկման կարգը» վերտառությամբ 17-րդ հոդվածի համաձայն՝ դատական կարգով ամուսնալուծվելիս ... ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն ... ամուսինների գույքի բաժանման մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է ամուսինների /ամուսիններից մեկի/ պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանում: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ եթե գույքի բաժանումը շոշափում է երրորդ անձանց շահերը, ապա դատարանը կարող է գույքի բաժանման մասին պահանջն առանձնացնել որպես առանձին վարույթ:

Ինչպես հետևում է նշված նորմերի պահանջներից, դատարանը պարտավոր է ամուսնալուծության պահանջի հետ մեկտեղ ամուսինների կամ նրանցից մեկի պահանջով լուծել նաև ընդհանուր համատեղ սեփականություն համարվող գույքի բաժանման հարցը: Ընդ որում, ամուսինների ընդհանուր գույքի բաժանումը օրենքով դատարանի համար դարձվել է պարտադիր պահանջ, այլ ոչ թե նշված հարցը լուծելու համար օրենսդիրը դատարանին օժտել է հայեցողական լիազորություններով:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքով սահմանվել է անկախ պետական գրանցումից իրավաբանական ուժ ունենալը այն իրավունքների և սահմանափակումների, որոնք ծագում են օրենքի հիման վրա: Այդ իրավունքների շարքին են դասվում ամուսինների իրավունքները: Այսպես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումներն ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից՝ ...2/ ամուսինների, երեխաների... իրավունքները, որոնք սահմանված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ, եթե նույնիսկ այդ իրավունքներն առանձին չեն գրանցվել:

Ամփոփելով վերոգրյալը և հիմնավոր համարելով վճռաբեկ բողոքի փաստարկները՝ Վերաքննիչ դատարանի որոշումը ԼՂՀ ընտանեկան և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի պահանջների խախտումներով կայացված լինելու մասին, Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատական սխալը՝ գործի էլքի վրա ազդած իրավունքի նորմերի խախտումները, հիմք է բողոքարկվող որոշման բեկանման և Առաջին ատյանի դատարանի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման վերացման համար, հետևաբար անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելու Գերագույն դատարանի լիազորությունը: Իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Իննա Բեհբուդի Մելքումյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 26-ի որոշումը և վերացնել հայցադիմումը վերադարձնելու մասին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 12-ի որոշումը:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ  
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ